

աշխարհքիս շատ զարմանալի շէնքերուն մէկն ալ հոն պիտի գտնուէր : Բայց բաղդին հակառակիլը մեր ձեռքը չէ : Բշտոնէն հազար տարի առաջ մէկ Հայու թագաւոր մը որ անունը արեւմտեայց գրքերուն մէջ Հայաստանին անուանը քով բռնած է , այսինքն Տիգրան , բոլոր Բիւրյ տիրելով , անոր ամէն պատուական զարդն ու մեծութիւնը իր շինած քաղաքը քի Տիգրանակերտի մէջ փոխադրեց . աս երկու քաղաքներն ալ ժամանակաւ հեռու՝ բաղդով գրեթէ նման՝ աշխարհիս ունայնուէր ահաւոր օրինակներ եղան : Տիգրանակերտ դեռ բոլոր զարդը չառած՝ իր շինողին աչքին առջևը մերկացաւ կողոպտուեցաւ աւրուեցաւ . Բնի հազիւ երկու թագաւորի կատարեալ աթոռանիստ եղած՝ իր թագէն զրկուեցաւ : Բն տարին որ Վագիկ Բ , որուն անունը առանց մարդուս սիրտը չմլելու չկրնար յիշուիլ , Բշտոյ պարսպին հիմնարկութեան դարագլուխը պիտի տօնէր (964—1064) , նոյն տարին Բլփասլան Պարսից բռնաւորը՝ պարսպին մէկ մասը փլցնելով ներս մտաւ , ու ան տարաբաղդ թագաւորը , որ իր հօրը անխոհեմ խոհեմութենէն , քանի մը ազգուրաց իշխաններէն , ու ագահ կայսեր մը բռնադատութենէն զրկուեր էր իր Բնիէն , Պիսա քաղքին օտարութեանը մէջ արգելուած առիւծի պէս մռնչելով լացաւ գերի ընկած աթոռը : Բնկէց վերջը Սիւրբ , Պարսիկք , Յոյնք և Թաթարք մէկմէկէ յափշտակելով ան գեղեցիկ որսը , տգեղացուցին . քանի մը անգամ շունչ առաւ , բայց Թաթարներուն բարբարոս ձեռքէն չազատեցաւ . անոնք իրենց Չարմաղան առաջնորդով բոլորովին հեռացուցին Հայերը անկէց . բնութիւնն ալ որ կարծես թէ իր տագոհութիւնը իմացնելու համար 200 տարի առաջ շարժ մը հանելով քանի մը շէնք կործաներ էր , 1319^{էն} նորէն սաստիկ ցնցմամբ քաղքին մեծ մասը փլուց ու փախուց բնակիչները , աւերակաց

խորհրդաւոր քողովը ծածկելով անկէայ : Բնունը դարէ դար՝ ազգէ ազգ անցած իջաւ իրեն յետին գաղթականաց , աւանդութեամբ մեզի ալ հասաւ : Եւ ատոնք ողբացին Բնի քաղաքը . Եւ նորհաւոյն հոգեբոգակ քնարն ալ ըսաւ .

“ Եւ դու երբեմն էիր
Սայեւական հարսն 'ի քողի ...
(Բսկ այժմ) անցին ըստ երազի ,
Որպէս ծաղիկ ամառայնի , ” :


Բայց Բնոյ անառիկ պարիսպները դեռ կէս մը կեցած՝ իրեն ներքին կիսակենդան մասերը կը պահեն . փլատակաց տեղափոխութեամբ ան աւուր պատերը լմննալու պէս չեն . բանուկ ճամբէ մը քիչ հեռու՝ աւելի կարծիքով քան թէ իրօք աւազակաց բնակարան սեպուած են իր ծածուկ խորշերը :

Ուրիշ հատուածով մը կը տեսնենք թէ աս հռչակաւոր մայրաքաղաքէն ինչ կայ մնացած ինչուան հիմա :

Հ . Ղ . Մ

Վերջիտ :

ՎՈՒՈՆԻԱ կամ Կողոնիա քաղաքը հին ատենէն 'ի վեր Վերմանիոյ ունակ Եւրոպայի խիստ անուանի քաղաքներէն մէկն է . այնչափ որ ատենով Վերմանիան Հռոմէ և Սարմատացի անուաններն ալ տուեր են անոր : Վերմանիէն Վէօն կ'ըսուի . Հռենոս գետին ձախ կողմը շինուած է կէս լուսնի ձևով , ու իրեն բարձր աշտարակներով՝ զանգակատուններով ու մեծամեծ շէնքերով հեռուանց շատ գեղեցիկ կ'երևնայ : Բարձր պարիսպ մը ունի վեց մղոն երկայնութեամբ , ու թառնուիրէք աշտարակով , մարտկոցներով ու խորունկ խրամներով , քսանուչորս ալ դուռ ունի պարիսպը :



Վաղարշապատի Տաճարի եկեղեցին :

Ընթացող քաղաքը Հռոմեացեցիք շինե-
րեն Քրիստոսէ 37 տարի առաջ, ու
իրենց գաղթականներուն բնակարան
ըրեր են . անոր համար անունն ալ
Վաղարշապատ դրեր են որ գաղթական ը-
սելէ : Գերմանիոյ հին և նոր պա-
տերազմներուն ատենները շատ ա-
նուանի եղեր է Վաղարշի իր ամրու-
թեանը համար . անկէ զատ նաև վա-
ճառականութիւնը խիստ ընդարձակ
արհեստներն ու գիտութիւններն ալ
շատ ծաղկած են եղեր . համալսարա-
նը Գերմանիոյ մէջ երևելիներէն մէկն
է եղեր . բայց հիմա շատ ընկած է
առջի մեծութենէն :

Ընթացող անկանոն է , և փողոցնե-
րուն շատը նեղ ու մութ են : Վա-
սանուհինք եկեղեցի կայ մէջը . ա-
մենէն հռչակաւորը մայր եկեղեցին
է , որ գոթացի ճարտարապետութե-
կողմանէ աշխարհքիս առաջին փա-
ռահեղ շէնքը կը սեպուի . ափսոս որ
գեռ շինուածքը բոլորովին չէ լմն-

ցած . հոս դրուած պատկերը 1841ին
ինչ վիճակի մէջ եղածը կը ցուցնէ :
Ընթացող սկսած է 1284ին . ձեռք խա-
չաձեռք է , երկայնութիւնը 400 ոտք ,
լայնութիւնը 180 . ծածքը 100 հատ
սեան վրայ կեցած է , և աս սիւնե-
րուն մէջտեղի չորսին շրջապատը ե-
րեսնական ոտք է : Հիմա Պրուշի-
տերութիւնը անբաւ գանձով ասոր
շէնքը լմնցնելու ջանք ունի : Ը առ
սրբոց մասունքներ ու անգիւտ բաներ
կան աս եկեղեցւոյս մէջ . գլխաւոր
հնութիւններէն մէկն ալ երից մո-
գուց գերեզմանն է՝ բոլոր ոսկիով ու
ազնիւ քարերով զարդարուած : Ը
գերեզմանը սնտուկ մըն է՝ մասնաւոր
մատրան մը մէջ դրած . ու վրան իրեք
հատ թագ կայ՝ ազնիւ քարերով զար-
դարուն , ամէն մէկը իրեք մոգուց մե-
կուն գլխուն կամ գանկին վրան դը-
րուած . աս անգին գանձը մեծն Սոս-
տանգիանոս արեւելքէն Պօլիս բերել
տուած է եղեր . անկէ Սիւլան քաղա-

քը գնացեր է, անկէ ալ 1170^{ին} եկած է Վրոյնիա, ու ինչուան հիմա հռչակաւոր ուխտատեղիներէն մէկն է: Եկեղեցիներէն զատ ուրիշ շատ մեծամեծ շէնքեր կան Վրոյնիային մէջ. մէկն ալ Հռենոսին վրայի կամուրջն է որ 1822^{ին} շինուած է, ու 1250 քայլ երկայնութիւն ունի:

Բնակիչներուն թիւը 68,000^{էն} աւելի կը հանեն. ասոնց 65,000^ը ուղղափառ են, մնացածը նորադանդ: Ուսումնական տեղերուն մէջ շատ անուանի է արքեպիսկոպոսական դպրոցը. ասոր մէջ աստուածաբանութեան վարժապետը՝ պատուական Սէքքէլ քահանան մեր հայերէն լեզուն ալ սորված է ինքիրմէ, ու աս տարի մեր վանքը եկաւ որ իր հմտութիւնը աս կողմանէ կատարելագործէ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏ

(Թուղթ շինելու հերպը:

ԹՈՒՂԹԸ որ ամէն տեսակ օգտակար բաներու կը գործածենք, մանաւանդ գրելու, տպելու, ու վրան բան գծագրելու, շատ լեզուներու մէջ, ինչպէս գերմաներէն, անգղերէն, գաղղիարէն և այլն՝ Պապիր ալ կ'ըսուի, որ Եգիպտոսի մէջ բուսնող եղէգի մը անունէն առնուած է: Եգիպտացիք աս տունկին ներսի կեղևներովը կը շինէին թուղթը, բայց կեղևներուն վրայ գիր գրելը շատ դժուար էր, և ատեն անցնելէն ետև դիւրաւ չէին կարգացուեր:

Հին ատենը արմաւի տերեւներուն վրայ ալ կը գրէին, ինչպէս ինչուան հիմա ալ Սալապարները կը գործածեն: Իսկ 70^{ին} ատենները Եգիպտոսի եղէգէն շինած թղթին տեղ սկսան բամպակէ թուղթ գործածել: Եւ դիւտը Երաբացիք Վերիկէն Եւրոպա բերին մետասաներորդ դա-

րուն մէջ. իսկ քուրջերէ թուղթ շինելը աւելի ուշ սկսաւ, այսինքն չորեքտասաներորդ դարուն ատենները:

Հիմա թուղթ շինելու արհեստը գրեթէ վերջի կատարելութեան հասած է: Հոլանտայիք, Վաղղիացիք, Բնգղիացիք ու Վերմանացիք ամենայն կերպով ջանացին որ մէկմէկէ աւելի աղէկ թղթեր շինեն. բայց վերջի ատեններս եղած կատարելագործութիւնը միայն թղթին աղուորութեանը համար չէր, հասկա որովհետև թղթագործները դժուարութիւն կը քաշէին բաւական քուրջ գտնելու, անոր համար մտածեցին որ եթէ կարելի է՝ ուրիշ բաներով ալ շինեն, որպէս զի աս պակասութեան տեղը լեցնէ:

1785^{ին} Լորիէ, Տըլի և Միսոն Տիւփերոն գաղղիացիները մէկ եղած՝ ընկերութեամբ գործարան մը կանգնեցին, ու մէջը սկսան բուսական բաղադրութեամբ թուղթ շինել. ասոր նիւթն էր եղի՝ ու իտալերէն լուֆօլ ըսուած բոյսը (ուսկից որ գարեջուր կը շինեն): Բայց աւելի անուանի եղաւ Լոտորայի քովերը Վուփս Սիլվանք անգղիացիին թղթ թարանը, որ թուղթը յարդէ սկսաւ շինել. բայց ասիկայ ալ միշտ դեղին կը մնար ու խիստ դիւրաւ կը կոտորուէր:

Իսկ ջրային բուսով թուղթ շինելը Կէթառ գաղղիացին հնարեց երկու հարիւր տարի առաջ. բայց որ և իցէ կերպով, թէ և բուսական բաղադրութեամբ ալ շինուէր ըլլայ, պէտք է մէջը միշտ լաթի կտորուանք խառնել՝ որ աւելի աղուոր ըլլայ: Եւ ճշըս թղթագործը բարակ ու հաստ թուղթ շինելու համար նաւերու մաշած ու փտտած պարանները սկսաւ գործածել որ շատ պիտուական բան է: Վաղ փրօթն ալ հին թղթերու և կապերտի կտորուանքը մէկտեղ բերած՝ սկսաւ անոնցմով նոր թուղթ շինել, անոնց